

Ե Ձ Ր Ա Կ Ա Ց ՈՒ Թ Յ ՈՒ Ն

**ՀՀ կենտրոնական բանկի կողմից սահմանված Բանկերի ներքին հսկողության
իրականացման նվազագույն պայմաններին համապատասխանության վերաբերյալ**

ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ խորհրդի կողմից հաստատված՝ ռիսկերի վրա հիմնված բանկի ներքին աուդիտի 2017թ.-ի Աշխատանքային ծրագրի համաձայն, ներքին աուդիտի կողմից կատարված աշխատանքների շրջանակում իրականացվել են նաև ՀՀ կենտրոնական բանկի կողմից սահմանված բանկերի ներքին հսկողության իրականացման նվազագույն պայմաններին բանկի ներքին հսկողության համակարգի համապատասխանության վերաբերյալ ստուգումներ և գնահատումներ:

Ստուգումների նպատակն է եղել գնահատել բանկի ներքին հսկողության, ռիսկերի կառավարման, համապատասխանության ապահովման, ներքին տեղեկատվական և հաշվետվողական համակարգերի արդյունավետությունը, որի նպատակով ստուգվել են բանկի ներքին հսկողության գործուն համակարգի ներդրման և շարունակական կատարելագործման ուղղությամբ կատարված աշխատանքները:

Ներքին աուդիտի կողմից կատարվել է նաև հետստուգումային հսկողություն՝ բանկի կողմից իրականացրած այն միջոցառումների նկատմամբ, որոնք առաջարկվել են ներքին և արտաքին աուդիտի, ինչպես նաև ՀՀ կենտրոնական բանկի ստուգումների արդյունքում:

Կատարված աշխատանքների հիմնական նպատակն է եղել բավարար հիմքերի ստեղծումը, որոնք հնարավորություն են ընձեռում արժանահավատ կերպով գնահատել բանկի ներքին հսկողության համակարգի արդյունավետությունը և կազմել համապատասխան եզրակացություն, համաձայն որի բանկում առանձնահատուկ ուշադրություն է դարձվում ներքին հսկողության արդյունավետ և գործուն համակարգի շարունակական զարգացման գործընթացին:

Հիմք ընդունելով վերը նշված աշխատանքների արդյունքները՝ ներքին աուդիտի կարծիքով 2017թ.-ի գործունեության ընթացքում ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ-ի ներքին հսկողության համակարգը համապատասխանել է ՀՀ կենտրոնական բանկի կողմից սահմանված բանկերի ներքին հսկողության իրականացման նվազագույն պայմաններին:

Ներքին աուդիտի վարչության պետ /

Գլխավոր աուդիտոր՝



Հովհաննես Հովհաննիսյան